


891.99
L - 70



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

~~3-93~~ 82C

~~167~~

334

ՇԱՀՐԻԱՐ

891.99

Ձ-70

Ա. Ա.

10 NOV 2011

01 JAN 2009

ԱՐԱՄԻ ՊՍԱԿԸ

(Հայ—թբական լեզվարումներից մի պատկեր)


1001
0866



(Արտաստղած «Մօնկ»ից)

ԹԻՖԼԻՍ
Տպոգրաֆիա Ս. Սովորովի և անդամնեաննեան
Տպոգրաֆիա Հ. Սովորովի և անդամնեաննեան

1922 Ամբողջ Հայաստան



14 FEB 2013

2005 MAC 10

ԱՎԱՐԱՅԻ

20207

ՕՐԱԿԱՐ ՊԱՍՊՈՐ

(ուժաբար մեջ թիվականութեան տարբերակը)


Дозволено цензурою, 25 января 1906 г. Тифлис.

(թիվականութեան հայոց տարբերակը)

ԱՎԱՐԱՅԻ

Առաջնային Առաջնային

Առաջնային պատճենահանձնութեան հայոց



ԵՐԵՄԻ ՊՍԵԿԵ

Հինգ օրից ի վեր թուրքելը պաշտպել
էին Ս. գիւղի:

Նրանք տարածվել էին մի ընդարձակ
գաշտի վրա, որ գտնվում էր Ս. գիւղի
հանգէտ և բաժանված էր նրանից մի մեծ
հովիտով, որի միջից հոսում էր մի վըտակ:
Այդ հովտից և վտակից պէտք էր անց-
նել և բարձրանալ դէպի բլուր, որի լան-
ջերի վրա շինված էին գիւղական տը-
սուկները: Բլրի գագաթը ներկայացնում էր
մի լայն սարահարթ, որ ծառայում էր քեօ-
շանի տեղ և ուր կառուցված էր շինական
անպատճոյն եկեղեցին: Այդ սարահարթը վեր-
ջանում էր վիթխարի ժայռերով, որոնք մի
շնական ամրութիւն էին կազմում և այդ
կողմից գիւղը անասիկ և անմատչելի կա-
րելի էր համարել:

Գիւղը վերցնել յարձակմամբ հեշտ
չէր, քանի որ պէտք էր մտնել նախ հովի-
տը և ապա բարձրանալ բլուրը, որի զանա-
զան կողմերում վինաւորված հայ կտրիծ
երիտասարդներ արթուն կերպով հակում էին
իրանց գիրքերից թուրքերի գործողութիւն-
ների վրա: Սակայն երկարատև պաշարմամբ,
կտրելով գիւղի հաղորդակցութիւնը քաղա-
քի և շրջակայ գիւղերի հետ, կարելի էր
ստիպել նրան անձնատուր լինել սովոր:

Գիւղացիները ունէին ցորենի մեծ պա-
շար հորերում, ուստի և հացի մասին ան-
հոգ էին, բայց նրանց մեծ մտատանջու-
թիւն էր պատճառում ջուրը. գիւղի միակ
աղբիւրը, որտեղից ամեն առաւօտ և երե-
կոյ ջահակ հարսերը և աղջկերը կուժերով
ջուր էին կրում և ուր գիւղի նախիրը ցը-
նում էր խմելու, գտնվում էր բլրի ստորո-
տում, վտակից մի քիչ բարձր. թուրքերը
կարող էին պատսպարվել հովախ ծառերի և
ժայռերի ետեռում և գնդակահարել աղբիւ-
րին մօտեցողներին: Թէև նրանք դեռ փորձ
չէին արել մտնել հովիտը, բայց երեկի այդ
շուտով տեղի կունենար, երբ նրանց թիւը
տեկի կըստուարանար:

Դիրքերից գիտող պահակները տես-

նում էին որ ամեն օր մրջիւնի նման հա-
շաքվում էին գաշտում թուրքերը և անա-
պարհը քաղաքի կողմից լցված էր սայլերով,
արաբաներով, Փուրգօններով, որոնցով
թուրքերը յոյս ունէին, երեկի, տանել մեծ
աւոր: Սայլերի շուրջը վխտում էին ոտա-
րորիկ կանայք, ոստոստում էին մերկ և
ցնցոտիապատ մասուկներ, չը նայելով որ
ստոտիկ ցուրտ էր և գաշտը ձիւնապատ:
Տեղ տեղ վասված էին մեծ խարոյկներ, ո-
րոնց շուրջը նստած էին իրանց մեծ մեծ
փափախներով աւազակաբարոյ թուրքերը և
պարաւեցնում էին փայտեայ շամփուրների
վրա ոչխարի մսի խորովածը կամ քուլա-
մայ էին պատրաստում:

Մի քանի ծերունիներ եռ ուղղակի
ձիւնի վրա եափունջիները տարածելով, նա-
մազ էին կատարում:

—Ախ, ախ, Յակոր, առաց գիրքերից
մէկի վրա պահակութիւն անող երիտասարդ
Արամը. մի տես այն քաւթառ Հասանը, որ
հարիւր անգամ մեր օջախի զլիին նստած
խորոված է կերել, ինչպէս է նամազ անում.
Երեկի խնդրում է Մահմէդին, որ ոյժ տայ
իր հալից ընկած բազուկներին, մեղ՝ գետ-
վուրներիս, սրախողող անելու: Զերքեր

քոր են գալիս, ճշմարիտ, կամենում եմ զբա-
դակս հասցնեմ կրծքին, որ էլ զլուխը չը
բարձրացնէ. ճը, ի՞նչ ես ասում:

—Գժութիւն մի արա, Արամ, հազար
անգամ քեզ ասել եմ, որ զուր տեղ չը պէտք
է փամփռշտ փշացնել. այ, երբ այդ անհ-
ծածները կը մտնեն ձորը, այն ժամանակ
կռանդ ոյժ տուր, ինչքան կարող ես: Վա-
խենում եմ, որ այս գիշեր նրանք չը մտնեն
ձորը և թագ չը կենան ժայռերի և մացա-
ների մէջ:

—Թող մի մանեն. ես բացի գնդակներից,
մի փառաւոր խաղ ես պատրաստել եմ նը-
րանց համար: Տեսնում ես այս ժայռը—և
Արամը մատով ցոյց տուեց մի մեծ ժայռ,
որ մի քիչ ճեռու բարձրանում էր, —ևս ար-
գէն փորել եմ նրա տակը. բաւական է մի
զօրեղ հարուած, ցնցումն, որ նա զլորվի
ձորը և ջալխախէ տասնեակ թուրքիր,
ուրոնք կը համարձակեն մօանալ ազրիւրին:
Բայց այս ի՞նչ է, ինչո՞ւ է եկեղեցու զան-
գակը զօղանջում:

—Երեկ տէրտէրը և մեր ծերակոյտը
խորհրդի են հրաւիրում. դու լաւ զիտիր,
գնամ տեսնեմ ինչ կայ. Հորիսիմէին կասեմ,
որ քեզ համար ուսելու ինչ կայ, այս րերեմ:

Այս անունից Արամը կարմրտակեց
նրա աչքերը փայլեցին ուրախութեամբ, բայց
շուտով կարծես մի մոայլ մտքից ցնցված,
նա տիսուր և վհատած հարցրեց:

—Ասա, Յակոբ ջան, ասա ինձ ճշմարի-
տը. քոյրդ նշանածն սիրում է ինձ, թէ
միայն հօրդ կամքին է հպատակում: Այն
միտքը, թէ նա ինձ չէ սիրում, ատանջում,
տոչորում է ինձ և ես արդէն վճռել եմ ա-
նելիքս այդ գէպքում, թուրքերի հետ կսիւը
կաղատի ինձ տանջանիքց. բայց, ինչ թագ-
ցնեմ քեզանից, թուրքերի գնդակից սպան-
վելուց առաջ, ես պէտք է շանսատակ անեմ
այն անզգամ Խաչատրին, որ յոյսը զրած
ի՞ր հօր հարստութեան վրա, կամենում է
խոր ձեռքիցս իմ նազելի Հորիսիմէին: Ես
չեմ զիմանայ այդ ցաւին, ինձ միայն միա-
մացնում են և փրկում յուսահատութիւնից
քո եղբայրական կարեկցութիւնը և քո խօս-
քերը:

—Դու գարձհալ, Արամ, քո զուսնան ես
փշում. ամօթ չէ քեզ պէս տղամարդի հա-
մար այդպէս վհատել. այն ես այսպիսի ծա-
նըր բոպէում: Միթէ գլխիդ փափախ չունես
զրած: Ես քեզ ասել եմ և կրկնում եմ. քու-
րբու, Հորիսիմէն քեզ է սիրում, քո արեակ

է երդիվում և որքան ևս կենդանի եմ, նա
բացի քեզանից, ուրիշի կին չէ կարող գա-
նալ: Մի թող ազատվենք այս թուրքերի
պատուհամից և քո հարսանիքդ կը կատա-
րենք ամենափառառը կերպով:

Զանկակը նորից հնչեց, այս անգամ
աւելի գօրեղ և շտապ:

Յակոբը, Ս. զիւղի քահանայի որդին,
արագ արագ քայլեց գէպի ըլրի գագաթը
և դիմեց գէպի եկեղեցին, ուր արդէն հա-
ւաքվել էին գիւղի ազատակաները:

Նա մի գեղեցկագէմ առոյգ, կորովի,
30 տարեկան երիտասարդ էր, բաւական
կրթված, ուսումը ստացած լինելով Գ. քա-
ղաքի հայոց ծխական դպրոցում և ամուս-
նացած լինելով, ունէր արդէն երկու զա-
ւակ—մի տղայ և մի աղջիկ: Նա հօր աչքի
լոյսն էր: Իբրև հին, նահապետական կենցա-
ղի և, աշխարհահայեացքի մարդ, Տէր. Բար-
սեղը իր տան, օջախի լոյս համարում էր
միայն Յակոբին, իսկ Հոփիսիմէին միայն
օտարի ապրանք, որ պէտք է աշխատել տե-
ղաւորել լաւ տեղ, մոցնել մի հարուստ տուն:
Գ. քաղաքի մանր առեւտրական խօջա Մին-
ասը, պէտք ունենալով տէր. Բարսեղի աղ-
դեցութեան և հեղինակութեան գաւառում,

առաջարկել էր Հոփիսիմէին առաջ իր որդի
Խաշատուրին, մի ագեղ և փշացած երիտա-
սարդի, որ յոյսը գրած հօր հարսառութեան
վրա, աւելացնում էր միայն քաղաքի շուայտ
և պորտաբոյծ թափառաշրջիկների և ան-
գործների թիւը: Բայց Հոփիսիմէն սիրում
էր իրանց գրացուհի պառաւ Սանամի տղին,
25 տարեկան, գեղեցկատեսիլ, իր քաջու-
թեամբ և ուրախ բնաւորութեամբ յայտնի
Արամին, որ նոյնալիս սիրահարուած էր
Հոփիսիմէի վրայ: Սակայն Յակոբը, որ
անկեղծ սիրով և իբրև ընկեր սիրում էր
Արամին, վճռական կերպով յայտնել էր հօ-
րը, որ թոյլ չի տայ Հոփիսիմէի ամուսնու-
թիւնը Խաչատուրի հետ և Հոփիսիմէի նշա-
նածը միայն Արամը կարող է լինել: Որդու
այս կտրուկ յայտարարութեան առաջ, տէր-
Բարսեղը չէր վստահանում առաջ քշել իր
ծրագիրը և սպասում էր պատեհ և նպաս-
տաւոր առիթի: Ծննդեան տօներին խօջա
Մինասը պէտք է իր տղի հետ հիւր գար
գիւղը և մատանին բերէր նշանադրութեան
համար, ուստի տէր. Բարսեղը շատ անհան-
գիստ էր և դեռ չէր որոշել ինչ գիրք բըռ-
նել, բայց թուրքերի անակնկալ յարձակումը
և գիւղի պաշարումը մոռացնել տուեց այդ

Հայոց Հայոց

Երբ Յակոբը մտաւ եկեղեցի, տէր-
Բարիքը արդէն կանգնած դասի մէջտեղ,
Հովհանքակի մօտ, խօսում էր:

— Օրնեալ ժագովուրդ, Աստուած մի նոր
միտառնաս ուղարկեց մեր գլխին, ում մըտ-
քից կանցնէր, որ քրիստոնեայ տէրութեան
մէջ, քրիստոնեայ թագաւորի օրով, անօրէն
թուրքը, մահմէզականնը յանդենի սուր
բարձրացնել հայ-քրիստոնեայի վրա, համար-
ձակի քանդել այրել քրիստոնէական եկե-
ղեցին: Մեր պատիքը և հայրերը, որոնք
զնացին քրիստոնեայ սուսի փէշից կպան,
ճանապարհ ցոց տուին նրան, առաջնորդե-
ցին և օգնեցին նրան խլել այս երկիրը
թուրքի ձեռքից, ամեներն չեն հաւտասայ
այն աշխարհում, եթէ մէկը նրանց տանի
այն լուրը, թէ այժմ թուրքը սուսի աչքի
առաջ կողոպտում, աւերում, հրկիզում է
հայ գիւղերը: Բայց մենք, նրանց սերունդը,
այդ օրն էլ տեսանք: Եւ ինչ ենք արել այդ
թուրքին, ի՞նչ վատութիւն ենք գործեր:
Նրանք ամրող ժամանակ վլստաներ էին
համցնում մեղ, գողանում էին մեր տաւարը,
մեր ապրանքը, բայց մենք համբերում էինք.
Աստուած մեղ մէկին տասն էր ապիս մեր

թափած քրտնքի, աշխատաւթեան համար.
Նրանք միշա գիւղում էին մեր օգնութեան,
սովի, նեղութեան ժամանակ. մեր աները,
մեր ամբարները բանում էինք նրանց ա-
ռաջ, մենք նրանց գործ, աշխատանք էինք
տալիս: Բայց ճշմարիտ որ պապական խօս-
քը, ժողովրդի ասուծը գանձ է. ախր չէ որ
ասած է «Ժողովին հաւտատալ չի կարելի, նա
չի պէս կը կծի քեզ, հէնց որ տաքացնես
նրան կրծքիդ վրա»: Հիմա մենք մեր աչքով
տեսանք այդ: Մեր հարեան թուրք գիւղերը,
որոնց այնքան լաւութիւններ եք արել,
եկել շրջապտակ հն, որ մեր գիւղն տանեն,
մեզ կոտորեն, մեր ունեցած շունցածը թա-
լանեն տանեն: Հինգ օր է մենք շրջապտա-
ված ենք, ճիշտ է, նրանք դեռ չեն համար-
ձակում գաշտից մանել հովիտը և նրանց
համար շատ զժուար կը լինի ձորից բարձ-
րանալ գիւղը, բայց եթէ մեծ թուով զրոն
տան, կարող են բաձրանալ, տալով բաւա-
կան զռհեր: Մենք էլ ընդամէննը ունենք 30-
40 կատող տղերը, բայց չէ որ մեր պաշտերը,
զնդակի, փամփառակի պաշտերը կարող է
համանել, այն ժամանակ մենք կորած ենք,
որովհետեւ փախչելու ուրիշ հլը և տեղ
չունենք:

— Ճիշտ է, ճիշտ, տէր-հայր, ասացին մի-
արերան ծերունիները:

— Ի՞նչ պէտք է անենք:

— Ի՞նչ պէտք է անենք, գրէթէ զոռաց
տէր-Բարսեղը. շատ պարզ է, պէտքէ մի
կերպ լուր հասցնենք քաղաք, որ մեզ օդ-
նութիւն ուղարկեն, զինոր ուղարկեն այդ
անօրէններին քշելու համար:

— Փառաւորվես, տէր հայր, բայց ո՞վ կը
գնայ քաղաք, ո՞վ լուր կը տանէ:

Տիրեց ընդհանուր լուռթիւն:

— Տգերք, ասաց տէր Բարսեղը, դիմելով
եկեղեցու դռան առաջ խռնված մի քանի
զինաւորված երիտասարդների. ո՞վ ձեզա-
նից տղամարդութիւն կանի, ո՞վ ձեզանից
կը կամենայ ազատել իր հայրենիքը, մեր
գիւղը և կը գնայ քաղաք մեզ օգնութիւն
բերելու:

— Ես, լսկեց խորին լուռթեան ուշջ մի
ձայն, որից տէր Բարսեղի ծնկները կը վե-
ցին, շոնչը բերանումն մնաց և մօտ եղաւ
որ ընկնի:

Նա լսեց իր որդի Յակոբի ձայնը:

— Դու, ասաց նա, նուաղած ձայնով և
խորին կոկիծով. դու, որդեակ, չես կարող.
դու զաւակներ ունես, ծերունի հայր և մայր.

թող գնա ամուրի երիտասարդներից մեկը
Եւ աղերսալից նայուածքը սկեռից
որդու վրա:

— Ոչ, հայր, պատասխանեց Յակոբը, դա
ամեն մարդի գործ չէ. այստեղ ճարպիկու-
թիւն պէտք է. ևս այդ պաշտօնը յոյս ու-
նեմ յաջողութեամբ կատարել, իսկ իմ զաւ-
ակներս, քեզ և մօրս, Աստուած կը պահ-
պանէ: Ես հէնց այս գիշեր ճանապարհ
կընկնեմ:

Տհանելով որդու վճռականութիւնը,
տէր Բարսեղը, բարկացած, գոչեց:

— Եթէ այգուէս է, ևս ինքս կը գնամ, և-
թէ չը կայ մի այլ կարին երիտասարդ, որ
գնայ. իսկ դու մնայ պաշտպանելու մօրդ,
ընտանիքդ և բրոջդ:

— Դու չես գնայ, տէր-հայր, այլ ես կը
գնամ, լսկեց յանկարծ մի նոր ձայն, և եկե-
ղեցու շէմքի վրա երեաց Արամի գեղեցիկ
դէմքը, հրացանը ձեռքին բանած: Բայց իմ
գնալը կախված է քեզանից:

— Ինձանից, հարցրեց անվստահարար
տէր-Բարսեղը:

— Այս, տէր-հայր, բեզանից:
Եւ մօտենալով նրան, Արամը չոքեց
նրա առաջ: Տէր Բարսեղը նոյնպէս չոքեց:

Արամը ինչ որ փսխաց նրա ականջին և
երբ տէր Բարսեղը ձեռքը դնելով նրա գըլ-
իին, ասաց բարձրաձայն. «Խոստանում եմ
սուրբ սեղանի առաջ կատարել ինդիրքդ»,
նա վեր կացաւ, ուրախ-ուրախ, ժպտուն,
դիմեց դէպի զուռը, և հրացանը վերցնելով,
շտապեց իր պահակավայրը:

Յակոբը հետեւ նրան:

II

Ա. զիւղի պաշարման տասներորդ օրն
էր լուսանում:

Ծննդեան ճրագալոյցի կտմ թաթախման
օրն էր:

Փչում էր վաղ առաօտից ցրտահար
քամի, սպանալով լուք, որ յանախ, ձմեռ
ժամանակ բարձրանում է Ֆ. քաղաքի շրջա-
կայ գաշտելի վրա: Մար ու ձոր լռնվել էր
ձիւնով: Քամին բարձրացնելով և տարածե-
լով օդի մէջ սառած ձիւնի փոքրիկ գնդակ-
ները, խփում էր մի անցորդի երեսին, որ այդ
օր, միայնակ, ընթանում էր անապատ զաշ-
տով, ուր լսվում էր միայն քամու զիւղուցը:

Ոչ մի այլ կենդանի շունչ չէր երկում
այդ լայնատարած, ձիւնապատ զաշտի վրա:

Անցորդը՝ եափունջու մէջ փաթաթված
մի բարձրահասակ տղամարդ, հրացանը ու-

սին ձգտած, մի հասու փակախ զվահին ովհեւե
ականջները խրած, ոտները արեխներով տմ-
բացրած, քայլում էր արագ, յաճախ կանդ
առնելով և սրելով ականջը, հենց որ օդի
մէջ մի շատկ, մի ձայն էր կարծում լուր:
Բայց գաշտում, իբրև անապատու՞,
գերեզմանային լուսթիւն էր ափրում: Ար
մերթ ընդհատվում էր բուք գուշակող քա-
մու սուլցով:

Անցորդը ընթանում էր ձիւնի մէջ,
կտրելով ահազին տարածութիւններ, որու-
նելով ձորեր, բարձրանալով բլուրներ, աշ-
խատելով միշտ հեռանալ ձանապարհներից
Նա քայլում էր տեղին լու ծանօթ մարզու
փստահութեամբ, յաճախ մըմնջալով: «Ճիւցն
թէ շտափով մթնիր»:

Թամին անդազար բերում խփում էր
նրա երեսին ձիւնի գնդակները:

Երբեմն նա կանգ էր ասնում, չոքում ձիւ-
նի մէջ, ձեռներով մաքրում, բայց անում հողը
և կոանալով, ականջը դնում հողին ու լուս:

Թամին ակսեց աւելի և աւելի թանդ
մոնչալ:

Բուք է լինելու, մտածեց անցորդը,
թող Աստուած խղճայ ինձ:

Անցորդը մեղ ծանօթ Արամն էր, որ

աջողութեամբ կատարելով իր միսսիան, կա-
րողացել էր 5 օր առաջ մտնել քաղաք, օգ-
նութիւն խնդրել իր գիւղի ազատման հա-
մար և այժմ ուշանում էր աւետելու պաշար-
վածներին, որ օգնութիւն շուտով կը հասնի:

—Բայց եթէ արդէն ուշ է օգնութիւնը.
Եթէ թուրքերը վերցրել են գիւղը:

Ամեն անգամ, որ այս ենթադրութիւնը
պատկերանում էր նրա մտքի առաջ, նրա
ամբողջ մարմինը փշաքաղ էր լինում, յու-
սահատութիւնից քիչ էր մնում գժվի, երբ
մանաւանդ մտածում էր, որ Հոփիսիմէն,
այդ նազելի կոյսը, կարող էր ընկնել թուր-
քերի ձեռքը:

—Ոչ, ոչ. նա հազար անգամ կը գլորէր
իրան ժայռերից վար, կտոր կտոր կը լինէր
առաջ քան թէ թուրքերը մօտենալին նրան:
առաջ քան թէ թուրքերը մօտենալին նրան:

Օրը հետզհետէ տարաժամում էր. քա-
մին աւելի և աւելի կատաղաբար էր մըսն-
չում, երբ յանկարծ, բարձրանալով մի բլրի
վրա, Արամը նկատեց հեռուից թանձր ծուխ:
Նա նոր նկատեց, որ շեղվել է իր գծած ճա-
նապարհից և մի քանի նշաններից հասկա-
ցաւ, որ դա Ի. գիւղն է, որ 15 օր առաջ
ենթարկվել էր թուրքերի յարձակման, ա-
ւերգել այրվել և կոտորվել: Ուրեմն գիւղը

գեն միտում է, մտածեց նա: Եւ յանկարծ
առասուաց:

—Իսկ եթէ գեռ կենդանի մարդիկ կան,
չլուց կարօտ օգնութեան:

Այդ անմիջական միտքը գրկեց նրան
իջնել, գնալ գիւղը և նայել, բայց մի նոր,
յուսահատու միտք կանգնացրեց նրան:

—Իսկ եթէ թուրքերը գեռ այդտեղ են:
Միենուն է, վերագտոնալ անկարելի է, ոլէտք
է այսաւելից անցնել:

Եւ նա արտգարար իջաւ բլրից, հասաւ
ձորը սկսեց բարձրանալ զառիվայրով, որ
տանում էր դէպի տափարակը, որը Հաս-
տափած էր այրված և թալանված գիւղը,
երբ լսեց մի սալլի ճռճոց և մարդկային
ձայներ:

Անմիջապէս նոտ մտաւ զառիվայրի կող-
քին գտնված անտառը և թաքնվելով ծա-
ռերի մէջ սկսեց շնչառապառ ականջ դնել:

Սայլի ճռճոցը աւելի մօտ լսվեց: Ծա-
ռերի արանքից Արամը նկատեց մի սայլ լի
զանազան տնային իրերով, գորգերով, չուալ-
ներով: Սայլի ետեից գալիս էին երկու ձի-
աւոր թուրք՝ պինաւորված. մի թուրք լսոյ-
ւում էր հետիսան, իսկ կողքին գնում էր մի
հայ տղա, զանատուած և հիւանդու: Արամը

1001
1986



քիշ մնաց զարմանքից ձիչ արձակէր, ուստի ճանաչեց Խաչատուբին, իր հակառակորդինչ Սայլի վրա նստած էր և մի 14—16 տարեկան հայ աղջիկ, որ շարունակ արտավուժ էր, նրա վրա ձգել էին մի վերմակ, երեխ ցըտից պաշտպանելու համար:

—Մի լար, էրմէնի աղջիկ, տօւմ էր հետիւն թուրքը, քեզ քեաբին կանեմ ինձ և այդ գեղեցիկ աշքերդ համբոյրներսկս կը ցամաքացնեմ:

Եւ մի լիսի քրթիչ հետեւց այդ խօսքերին:

Արամը ամբողջովին կրակի պէս վառվում էր, նա երեակայից իր չոփփոխենու այդ գորութեան մէջ, նրա վճիռը վայրկենական եղաւ և տանց կշռելու հետանքները, մղված միայն մի հրամայողական դրդմամբ՝ պատժելու լկոի թուրքին, նա ուղղեց հրացանի փողը ծառերի արմանքից դէպի թուրքը, հրացանը որոտաց, զնդակը ուլացաւ և թուրքը ըսկաւ արիւնաշաղախ ձիւնի վրա Դեռ միւս ձիւոր թուրքերը չէին կարողացել իրանց հաւաքել, որ և է բան վճռել, երբ երկրորդ հարուածը գետին տապահեց ձիւոր թուրքերից մէկին և ձին ևս ոկախ փախչել, երբորդ թուրքը ձիւորը քաշեց ձիի

տանձը և ն ակողքերին խփելով, փախաւմի փոքր տեղ, երբ երրորդ գնդակը եսեմից միրաւորեց ձիուն փորից և ձին ոտքերը պարպեց, իր տակով անմելով թուրքին:

Հայ գերին և գերուհին սարսափահար մնացել էին, երբ անտառի միջից դուրս վագեց հրացանը ձեռքին և խանջալը քաշած Արամը, Նա վաղեց դէպի թուրքը և բարձրացրեց խանջալը՝ թուրքի կրծքի մէջ խրելու, երբ նկատելով թուրքին արիւնաշաղախի, ձեռքը յիս բաշեց:

—Խփիր, խփիր գուաց հայ աղջիկը, մի խնայիր գրան, դա սպանեց հօրա և հղուորս, թալանեց մեր տունը:

—Զարժէ, նա արչէն չար հոգին յանձնում է սատանային, տասց Արամը և մօնեցաւ սայլին:

Տեսներավ Խաչատուբին կծկված սայլի ետիւում, նա չը կարտղացաւ զապել ատելութեան զգացումը, բայց կարեկցութիւնը յաղթեց այդ վատ զգացումը և նա տասց:

—Իսկ գու ինչպէս ես ողջ ու առողջ մնացել:

—Ես գտնիւմ էի գիւղում, երբ կոտրածըն սկսվեց, հայրս ուղարկել էր նիոխանիրը հաւաքելու, ինձ ճանաչնց հուսէինը և

ազատեց, որպէս զի հօթիցման մեծ պիրկանք պահանջէ: Ի ոչը Աստծու, ինձ պաշտպանիր և աղատիր:

Արամը արհամարհական ակնարկ ձգեց գունատված երիտասարդի վրա և զիմեց աղջկան:

—Ասա, ուր պէտք է տաճեմ քեզ, ինչ անեմ:

—Ինձ յետ տար գիւղը, այնտեղ այլ և թուրք չը կայ, ամենքը գնացել են Ս. գիւղի պաշտրման:

—Գիւղում կենդանի մարդ մնացել է:

—Միայն պառաւ կանայք և ծերեր, պատախանեց Խաչտոռը. տղամարդկանց մեծ մասը կոտորվել է, այրվել է աներում, իսկ մի մասը փախել է: Ո՞ւզ, ինչ ցուրտ է. ես կը սառչեմ:

—Ուրեմն իջիր սայլից, զիմեց Արամը աղջկան, ոտքով գնանք, ձեզ տանեմ գիւղը հասցնեմ, ես ոլէար է շտապեմ Ս. գիւղին յայտնելու, որ դիմանան, վազը օգնութիւն կը գայ քաղաքից:

—Այս ցրտին, այս բուքին ինչպէս կը գնաք, հարցը աղջկեց աղջկեց. չէ որ շուտով մութը կը կոխի: Մնացէք մեր գիւղում. այնտեղ այլ ևս թուրք չը կայ, սրանք վիրջին-

շնորհ էին, որ մնացել էին իրանց բաժին տուարը տանելու, ինձ ևս զտան զարմանուցում թագնված, երբ կրակ տուին և ես տոփիվեցի գուրս գալ:

Բայց յանկարծ աղջիկը գուղիւը գարձնելով դէպի ընկած ձիու կողմը, ուրսափահար պռոաց:

—Տես, տես, թուրքը շարժվում է. նա արգէն ձիու ատկից գուրս է եկել. իսկիր նրան, սատկեցրու, նա գեռ կենդանի է:

—Մի և նոյն է, նա ցրտից կը սառչի, կը մնանի, ասաց Արամը. Նա երկի շուտով հոգին կը առայ. շատ որեք գնանք սայլը կը մնայ այստեղ մինչեւ Ս. գիւղը կազամպի, մարդ կուղարկենք կը բերեն: Այստեղից 10 մերստ է մեր գիւղը. լաւ ժամանակ կը հասնեմ, զուցէ թաթախման ևս հասնեմ:

Եւ երկը միասին զիմեցին դէպի գիւղը:

Թամբն այլ ևս սաստիկ չէր մոնչում հովտի մէջ, անտառը և շրջակայ սարերը մեղմացնում էին նրա հոստոքը. նոյն իոկ ամպերի տակից երբեմն երրիմն արեգակը միքանի թոյլ ճառագայթներ էր արձակում:

Հազիւ նրանք զասիվայրը անցան և հովտը անհետացաւ. նրանց աչքից, երբ ձիու արիւնով շաղախափած թուրքը, որ առմնուն չէր զիրաւուվել, զլուիը բարձրա-

յրից, պատշութեամբ դիսեց, որ ամ ևս ոչ ոք
չը կայ և վեր կենալով, մտաւ անտառը:
—Անիծեալ էրմանու բալար, մքանչաց
նա, ևս ըս ձաշը կրիմ:

Եւ, թողնելով իր սպանված ընկերներին և սայլը հովում, աղառելով լծից
գոմէշները, նա արիւնաթաթախ եափնջին
դրատելով վրան, միամտվելով որ աարձանակը իր գօտուց կախ է ընկած, անտառի
միջով, գաղտագողի սկսեց լնթռնալ: Նա
յոյս ուներ զուտով վերադառնալ, վերցնել
գիտեները ու սայլը և տանել: Նու գիտէր
որ ոչ մի աղամորգի մինչև յաջորդ՝ բը
սիրո ջի անի այդանդից անցնել:

—Անզգամ էրմանի աղջիկ, ևս քո ձաշն
էլ կեփեմ, բարկութիւնից կատաղած խօս-
սեց ինքն իրան. հէնց այս գիշեր...

III

Արքան էլ Արտամը, բիրու բնութեան
մէջ մնձացած զաւակ, անագորոյն կեանքր
դառնութիւններին ընդելացած, թէի մատագ
հասակում, և աշքերը արդէն թուրքական
վայրագութիւններին սովորած, պատրաստ-
ված էր փոքր ի շատե սառնարատութեամբ
վերաբերելու սրածութեան և աւերման
տհսարաններին, բայց այն, ինչ որ ահսառ

նա ի, զիւզը մտնելիս, հեռու էր մարդկա-
յին ամեն երեակայութիւնից: Այրված անե-
րը դեռ միտու էին. նեղ, ծուռ ու մուռ
փողոցները անանցանելի էին կոտրտած,
ջարդված կարասիներով և մանաւանդ յօշոտ-
ված սոսկալի զիակներով, մի տեղ ընկած
էր մի գլուխ, մի քիչ հեռու մի ոտ, մի բա-
զուկ, զիակներ՝ զարհուրելի վէրքերով: Տեղ
տեղ ձիւնը մուզ կարմրագոյն էր, խացած,
լճացած և արդէն սևացած մարդկային ար-
իւնով ներկված: Ծների զգուելի գոհմակներ
թափած այս և այն զիակի վրա, լափում
էին, կրծոտում, յօշոտում և ոէխները արիւ-
նուված հեռանում: Մի այրված տան միող
փլատակների վրա ընկած էր մի ջահէլ կին,
որովայնը պատուած, իսկ կողքին ընկած
էր արգանդից հանած պտուզը:

—Աստուած իմ, Աստուած իմ, հեծկլտաց
Արամը, միթէ այս օրն էլ պէտքէ տեսնէինք,
միթէ մարդ արարածը կարող է այսքան
զալան լինել թնջ են արել այս թշուառ կա-
նայք, այս անմեղ երեխանները: Եւ միթէ
Աստուած կայ, ոչ, ոչ, սուտ է, չը կայ Աս-
տուած, չը կայ մարդկային խիզ, չը կայ
ոչ մի արգարութիւն:

Կոկիծից, յուսահատութիւնից, ցաւի

սաստիկ ժորմոքից նա, պրեթէ խելտպար,
ընկաւ մի գերանի վրա, մի սլատի տակ և
սկսեց ազիտղորմ արտավիլ:

Մութը սկսեց կամաց կամաց կոխել,
քամին նորից մոնշել և շաղ տալ ձիւնը
սեացած, մխող վլատակների վրա: Տեսնելով
Արամի լացը, աղջիկն ևս սկսեց լալ. այդ
լացը ուշըի բերեց Արամին, որ յանկարծ
մտաբերեց, թէ հարկաւոր է իրան շտապել
և որ գուցէ իր հայրենի Ս. գիւղին և իր
սիրելի Հոկփոխմէին նոյն սոսկալի վիճակն
է սպասում, որին ենթարկվել է Բ. գիւղը:
Տեսնելով, որ Խաչառուրը կիսամեռ է զրե-
թէ և նրա վրա ոչ մի յոյս գնել չէ կարելի,
Արամը հարցրեց աղջկան, արգեօր գիւղում
կենդանի մնացած կայ: Աղջիկը յաշանեց,
որ իր տատը թեթև վիրաւորված լինելով,
երբ թուրքը իրան քաշեց զուրս հանեց,
երկի դեռ ողջ է և խնդրեց հետեւ իրան:
Շուտով երեքն էլ կանգ առան մի գետնափո-
րի առաջ, որի երդիկից ծուխ էր գուրս գալիս:

—Նանի, նանի ձախ տուեց աղջիկը,
դուրս եկ, մի վախեցիր, ևս եմ, Շուշանը,
թունդ, թուրք չը կայ, հետո հայեր են:

Գետնափորի մէջ իրաբանցուս լսվեց.
բայց մօտ մի քառորդ ժամ անցաւ, մինչեւ

որ մի դուռ ճռաւաց և մի ողառաւ կիսուրով
եկաւ, նրա հատից հետզհետէ գուըրս եկան
մի քանի ուրիշ պառաւ կանթյք, սրոնք ու-
նելի ուրուականների էին նման, պազպած
շորերով: Շուշանը վաղեց տատի դիրէն լու-
կաւ: Հեծկլտանըրի, աղի արտասուքի մէջ
պառաւը համբուրում էր աշքերը, մազերը,
երեսը, շարունակ կրկնելով ռատիկի լու: էր
մեռնէիր, քան թէ թուրքը քեզ տաները և
միայն այն ժամանակ հանգստացաւ, երբ
Շուշանը պատմեց որ թուրքը իրան ձեռք
չէ տուել և սպանվել է Արամի ձեռքով:

Երկար հարց ու փորձից յիշոյ Արամը
իմացաւ, որ գիւղում այժմ միայն մնացել են
այդ հօթը պառաւները, թուրքերը, զժուար
թէ վերագառնան գիւղը, քանի որ ինչ որ
թալանելու էր, թալանել տարել են, աները
հրդեհել և կատորել պաշտպանվողներին,
որոնց մի մասը փախել է ուրիշ գիւղերի

Պատրաստվելով մեկնել Արամը տօսց
Խաչառուրին և Շուշանին:

—Այս գիշեր ոչ մի երկիրդ չը կայ, վաղը
առաւօտեան շուտ մի բարձր տեղից դիտե-
ցեք և երբ կը տեսնէք ձիաւորներ ուռւ կո-
ղակների կամ զինւորների հետ, ամենք
վաղեցէք նրանց մօտ և նրանք կը բերեն

Ճեզ Ս. գիւղը, ուր են այժմ՝ պէտք է զնամ։
Եւ յանկարծ զգալով քաղց, ու յիշելով
որ առաւօտից բերանում պատառ չէ զրել
Արամը հարցրեց Շուշանի տատից։

—Նանի, մի կտոր հաց չունե՞ս, կամ ու
տելու որ և է մի բան։

—Նանու աչքերը կուրանային, որդի, որ
այս ու օրը չը տեսնէր, մենք անմենքս այս-
օր սոված ենք մատել, թէ նորերում թագ-
յրած ցորեն ունենք, բայց վախում էինք
այստեղից դուրս գալի Աւելի լաւ էր մեռ-
նէինք, այս տեսակ թշուառութեան չը պա-
տառէինք։

Եւ պառաւը նորից սկսեց հեկեկալ ու
սղբալ իր սիրելիների կորուստը։

—Եօթանասունինգ տարեկան եմ, շիւան էր
անում նա, և երբէք այսպիսի զուլում չեմ
տեսել։ Ոչ մի տարի չէր լինում, որ այսօր
թաթախման գիշերը, ամեն բարութիւննե-
րով լի իմ օջախի, իմ սուփրի շորս կողմը
հաւաքված չը լինէին հիւրեր, ազգականներ,
ազբատներ, զարիբներ, իսկ այսօր, իմ այդ
չէն ու ճոխ օջախը կործանվել է և թաթախ-
ման օրը մի պատառ հաց անգում չունենք
ճաշակվելու ինչնէ Աստուած իմ հոգին մի
ամիս առաջ չառաւ։

Եւ հեծկլատանքի մէջ դասնալով Արա-
մին, սսաց։

—Բայց դու, սրդի, մի գնա, տեսնում ես
ինչ բուք է սկսել, մութն էլ ընկել է, այս
ժամանակ, հարամիների կատաղած ժամա-
նակ, ճանապարհ գնալը քեալազեօզութիւն
է. Կե, մտիր մեր խարաբան, քնիր, առաւո-
տը կը գնան, մեզ էլ կազատեն։

—Ոչ, նանի ջան, ես առանց այն էլ շատ
ուշացայ, պէտք է անպատճառ գնամ, մնաք
բարե, չը մոռանաք կատարել առաւօտեան,
ինչ որ պատութիրեցի։

Սյդ միջոցին շունը ոռնաց։
—Տէր սիայն հախը ձայնդ կտրի, խաչա-
կնեց պառաւը և կրկնեց։

—Տեսնում ես, սրդիակ, շունը ոռնաց,
այդ վատ նշան է. թարսութիւն մի արա,
և կ մնայ այս գիշեր։

Բայց Արամը արգէն անհետացել էր
մթութեան մէջ։ Նա սկսեց շտապով անցնել
գիւղի վողոցները, աշխատելով ոչինչ չը
տեսնել։ Մութը թէն տիրել էր, բայց երկին-
քը այլ ևս ամպամած չէր և փայլում էր
բիւր աստղներով, ուստի և բնութիւնը չէր
ընկղզմէլ կատարեալ խաւարի մէջ։ Բաքը
չէր դադարում և ցուրտը արգէն զգացնել

Էր տալիս իր դժնակութիւնը, իսկ քաղցը
նեղում էր մի ո կողմից: Սակայն իր տես-
ուած սոսկալի և քատմանելի տեսարանները
խռովիլով և արելութելով նրա հոգին, շուտով
մոռացնել տուին և քաղցը, և ցուբը և նա
անձնատուր եղաւ ամրողջովին մռայլ և
տիուր խորհրդածութիւնների: Նա քայլում
էր խիստ արակ, պրեթէ վազում՝ էր և ոչ
շշուկ, ոչ որ և է մի ազմուկ չէին գրաւում
նրա ուշաղբութիւնը ու հարկագրում զգոյշ,
պատու լինել առակնկալ յարձակու մից: Նա
հոյս իսկ չը նշատեց թէ ինչպէս դուրս հ-
կաւ գիւղից, մտաւ մեծ ճանապարհը և
ուրաց զնուր անտառի ուզութեամբ: Նրա
ուշը չն գրաւեց և մի կասկածելի ազմուկ,
որ երբեմն երբեմն զալիս էր անտառից, որ
պէս թէ մէկը քայլելիս լինէր: Մաքերի այն-
պիսի մի մեծ հոյլ սեղմում էր նրա գանգը,
որ նա կարծում էր, թէ կամ պէտք է ինեւ-
րագրիի, կամ գանգը պէտք է տրարիի:

— Միթէ ակամորդին այգպէս գազան է,
միթէ Աստուած սակզծեց այդ գաղան մար-
դին, միթէ մարզը Աստծու պատկերին է,
ինչպէս շարօնակ քառում է տէր Բարսէ-
զը, միթէ նա հաճոյը է զգում, երբ հաւի
ծուուի նուո՞ թրապացնում է անմեղ երե-

խաներին խանջալի հարուածների տակ: Ավոր
ինչի համար է մարզը սպանում իր նմանին.
միթէ աշխարհու նեղ է և թուրքի և հայի
համար: Եւ արժէ ուղբել այսպիսի մի աշ-
խարհում, երբ երկու և դրայրներից աւազը
կայէն է, կրասերը Արել:

— Բայց չէ որ դու էլ հէնց մի քիչ առաջ
սպանեցիր երեք թուրք:

Թէև այս ձայնը գալիս էր Արամի իրա
նոգու խորքից, բայց նա կտրծեց թէ մի
ուրիշն է մնդագրում իրան, ուստի որոտըն-
դոսս պատասխանեց:

— Ես սպանեցի նրա համար, որ այդ երեք
թուրքերը սոսկալի ոճիրներ էին գործել,
որ նրանք մարզիկ չէին, այլ գագաններ:

Իր սեպհական ազագակը մի քիչ ուշ
քի բերեց նրան, նա նոր նկատեց, որ միայ-
ակ է, սիայնակ ձիւնապատ անապատում,
որ անտառը վերջացել է, որ քամին մնչում
է, որ ատազերը փայլատակում են երկնքի
մբա, որ պէտք է շտապել, քանի որ լուսը
դեռ չէ ցոյց տուել իր ամբողջ կատաղու-
թիւնը: Յանկարծ, նա իր եակից լսեց մի
ուսնաձայն և հազիւ ժամանակ ունիցաւ յետ
նայելու, երբ ատսանանակի հարվածը որոտաց,
և նա զգաց, որ մի բան դիպաւ իր ուսին:

Նա միայն նկատեց մի բանի քայլ հեռու մի մարդ, որ փորձում էր նորից խփել տարձա-
նակից, քաշեց իր խանջալը և սլացաւ դեպի
խփողը, ատրճանակը նորից որոտաց, բայց
Արամը սլացաւ թուրքի վրա, որին ճանաչեց
և խսնջալը այնքան ուժգնապէս իջեցրեց
նրա զլխին, որ թուրքը միայն մի խրխոսց
արձակեց և դիապասոտ ընկաւ ձիւնի վրա,
ահագին տարածութեան տեղ ներկելով գըլ-
խից վշացող արիւնով:

Տեսնելով թուրքի արիւնապանդ մար-
մինը և սոսկալի դէմքը, Արամը, գրեթէ
խելակորսոյ, չը հաւատալով, որ ինքն սպա-
նեց, սկսեց փախչել նրան թւում էր, որ
հարիւրաւոր հարամիներ նրա հետեխն են
ընկել, թուրքի սոսկալի ուրուականը հալա-
ծում էր նրան և միայն սաստիկ ցուրտը ու-
ռուի կակիծը ստիպեցին նրան կանգ առնելո-
ւ երը ձեռքը տարաւ դէպի ուսը և յետ
քաշելով տեսաւ արիւնաթաթախ, նոր հաս-
կացաւ, որ վիրաւորվել է ուսից և նկատեց,
որ եափունջին ընկել էր Մի կողմից արիւ-
նանսութիւնը, միւս կողմից ամբողջ օրվայ
ան սուազութիւնը ուժառպառ արին նրան
և նա, նկատելով մի մեծ քար ճանապարհի
եղրին, նոտեց մի քիչ հանգստանալու:

Աւոք, ինչ ցուրտ է հառաչեց նա, զգալով
ցրաի սաստկութիւնը, և ինչպէս ցաւում է
ուսու, պէտք է կապել վէրքը:

Բայց նա նուազեց, ուշաթափ եղաւ և
պարզվեց ամբողջ մարմնով ձիւնի վրա:

Բաւքը արգէն հասել էր իր գագաթնա-
կէտին, քամին մոլեգնաբար մոնչում էր,
աստղերը շարունակում էին այնու ամենայ-
նիւ մեղմօրէն փայլատակել և ճօճել երկնա-
կամարի վրա, ողողելով իրանց աղոտ լոյ-
սով գաճաճ երկիրը, որ իր բոլոր արհաւերք-
ներով, գազանութիւններով, սարսափներով
միայն մի հետէ էր ներկայացնում անսահ-
ման տիեզերքի մէջ:

IV

Երբ Արամը աչքերը բացեց, նա ամ-
րող ընութիւնը կերպարանափոխված գտաւ:
Խորին, համատարած լուսթիւն և անդորրու-
թիւն. բուքը բոլորովին գաղարել էր և երկ-
նակամարի վրա մեղմ, գաղջ լոյսով փայլում
էր լուսինը ու նրա փայլից ձիւնապատ դաշ-
տը շողշողում էր: Գիշերից բաւական ժա-
մանակ անցած պէտք է լինէր: Եւ ով զար-
մանք. Արամը ցուրտ, կոկիծ չէ զգում: մի-
այն նա չէ կարողանում շարժվել տեղից:

Նրա անդամները չեն գործում, բայց իր
ամբողջ մարմնի մէջ նա մի տեսակ հաճելի
հշշտափական հոգանք է զգում: Նրան
թւռում է, որ նա իր ամբողջ մարմնով բարձ-
րանում է օգի մէջ դէպի երկինք: Բայց այս
թէնչ է, նա պարզ աեւում է, հիացած տես-
նում է, որ երկինքը բացվեց, ահա մի սահ-
պուխ կախվեց, երկար-երկար, մինչև հասաւ
երկրին, այստեղ, ուր Արամի ինքը պարզը-
ված է, անդուխի աստիճաններից անդա-
դաբ իջնում են հրեշտակներ, ոսկեցօղ թե-
ւերով: Մի հրաշալի մեղեղի տարածվեց ամ-
բողջ բնութեան մէջ, երգում են հրեշտակ-
ները, մօտենալով նրան: Ահա նրանցից մի-
սր, իր եթերային աջով գիսպաւ Արամի ու-
սին: Արամը ոտքի կանգնեց կայտառ, ուրախ,
թեթե, պայծառ: Որքան եղաւ նրա հըր-
ծուանքը, ուրախութիւնը, երբ մի նազելի,
գլուխի կոյս կանգնեց իր առաջ և ձեռքը
մեկնեց նբան, հարսական քողի տակից
ժպտալով: Արամը ճանաչեց Հոփիսիմէին,
իր նշանածին: Հրեշտակները նորից լցրին
օգը իրանց մեղեղում: «Փառք ի բարձուն
Աստուծոյ եւ լուսին խ այսպարբան, ին մար-
դիկ և մնուքիւն»: Հոփիսիմէն ձեռքը տուից
Արամին, հրեշտակները շրջապատեցին նը-

րանց և նրանք ամենքը բարձրացան ու սլաշ-
ցան օդի մէջ: Բայց ահա նրանք սկսեցին
իջնել: Արամը ձանաշեց իր հայրենի Ա. գիւ-
ղի վիթխարի ժայռերը, որոնց վրա նրանք
կանգ առան: Բայց այս ինչ կերպարանափո-
խութիւն է, միթէ ոս Ա. գիւղն է, միթէ
ոս այնպէս մաքուր, կոկիլ: Չէն և բարե-
կարգ էր: Հոփիսիմէն նորից ձեռքը տուեց
երջանիկ Արամին և հրեշտակների ուղեկցու-
թեամբ նրանք դիմեցին դէպի եկեղեցին:
Չէ, ոս երազ չէ, իրականութիւն է, ահա և
Յակոբը ընդ առաջ է գալիս, մոմը ձեռքին:
ահա և տէր-Բարսեղը, թէկ ոչ շուրջառ
ուսի, ոչ սաղաւարտ: Բայց նա, տէր-Բար-
սեղը, ուրախ ուրախ ասում է:

—Եկ, Արամ, եկ կատարեմ պատկր Հոփի-
սիմէի հետ:

—Երջանիկ, երջանիկ կեանք, բախտա-
ւորներ, լսում են ամեն կողմից:

—Բայց թուրքերը, թուրքերը, Յակոբ-
ջան, հարցնում է Արամը:

—Ինչ թուրք, այժմ ոչ թուրք կայ, ոչ
չայ այժմ ամենք եղբայրներ ենք, այն քո
տեսածը լոկ երազ էր, զարհուրելի, քըս-
ալմանելի երազ:

Նորից օգը լցվեց հրեշտակների մեղե-

գիով — «Փառք ի բարձունս Աստվծոյ, եւ յիշ-
կիր խաղաղութիւն, ի մարդիկ հանութիւն»:
Ապա ամեն բան լուեց, անհետացաւ, տիրեց
խաւարը և Արամը այլևս ոչինչ չը լսեց:
Նրա հոգու վրա իջաւ խաղաղութիւն, ան-
դորրութիւն:

V

Երկրորդ օրը, Զրօրհնէքի օրը, երբ
Գ. քաղաքից զուրս եկած հայ կտրիճները
զինւորների հետ շտապում էին Ս. գիւղը
ազատելու թուրքերից, գիւղից երկու վերստ
հեռու գտան Արամի դիակը, սառած. բայց
զարմանալի բան. Նրա ամբողջ գէմքի վրա
փայլում էր երանութեան պայծառ արտա-
յայտութիւն և բաց աչքերի մէջ կարելի էր
կարդալ հոգեկան խորին հրճուանք:

Ս. գիւղը ազատվեց և ողբաց իր ա-
զատչի մահը:



Բանուի Հայոց

Հոկիսիմ Անն Դպրոց

7/31. 1922

Եղիշ. ծխակ (Ծխակ Հայոց)

Հայոց Հայութիւն

Հայութիւն Անդինի

Հայաստանի Ազգային գրադարան



NL0438347

20.207

